ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-150-22.05.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 880 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-150-22.05.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ, սակայն ըստ էության 1-ին պարբերությամբ կրկնվում է օրենքի նախաբանի բովանդակությունը, իսկ 2-րդ պարբերությամբ ներկայացված բովանդակությունն արդեն իսկ կարգավորված է «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, որով սահմանված են ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայություններն ըստ հերթականության, միևնույն ժամանակ սահմանված է, որ ջրերի բաշխում չի կարող տեղի ունենալ, եթե այն վնաս է հասցնում ազգային ջրային պաշարին, իսկ ազգային ջրային պաշարը՝ բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրի անբավարարության հետևանքով հիվանդությունները նվազեցնելու ու կանխարգելելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանումը և օգտագործումն է:

Բացի այդ, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են արտակարգ իրավիճակների հետ կապված առանձնահատկությունները, որում նշված է, որ ջրային ռեսուրսների մատչելիության հետ կապված արտակարգ իրավիճակներում ջրային ռեսուրսների օգտագործման սահմանափակումն իրականացվում է նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-9-րդ կետերով սահմանված՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունների փոփոխությամբ՝ հակառակ հերթականությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծի 1-ին հոդվածի անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ դրանով առաջարկվող փոփոխությունն արդեն իսկ կարգավորված է ՀՀ գործող օրենսդրությամբ:

2. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը նպատակահարմար ենք գտնում դիտարկել ՀՀ Ազգային ժողով երկրորդ ընթերցման ներկայացված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որով ամրագրվում են նոր փիէկերի կառուցման համար արգելված գոտիներ և կառուցվող փիէկերին տրամադրվող ջրօգտագործման

թույլտվությունների հայտերի մերժման հիմքեր: Վերջինիս ընդունումից հետո կսահմանվի փիէկերի կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, կարևորելով Սևանա լճի ավազանի պահպանության խնդիրները, իր առաջարկությամբ փոփոխություն է կատարել ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի N 3 արձանագրային որոշման մեջ (քաղվածք ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 30 նիստի արձանագրությունից)՝ հանելով փիէկերի զարգացման սխեմայից «Սևանա լճի ավազան» բաժինը:

3. Նախագծի 3-րդ հոդվածի հետ կապված առաջարկում ենք փոփոխվող հոդվածը թողնել անփոփոխ, քանի որ առաջարկվող կարգավորումը կարող է հանգեցնել այն վիճակին, որ եթե տվյալ տարի գրանցվի Սևանա լճի բացասական հաշվեկշիռ, ինչը կարող է առաջանալ նաև բնակլիմայական պայմանների փոփոխման արդյունքում, ապա կսահմանափակվի «**Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին**» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6.1-ին կետով սահմանված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն քանակի՝ 170 մլն մ/խ չափաքանակի օգտագործման հնարավորությունը:

Միևնույն ժամանակ հարցի կարգավորման նպատակով, բացասական հաշվեկշռի բացառման սկզբունքից ելնելով, առաջարկվում է լրացում նախատեսել «**Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին**» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6.1-ին կետի 2-րդ պարբերությունում՝ սահմանափակելով օրենքով նախատեսված չափաքանակից ավել ջրառի իրականացումը Սևանա լճի բացասական հաշվեկշռի պարագայում:

3 հուլիսի 2019 թվականի N 880 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-150-22.05.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 3
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-150-22.05.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սևանա լճի մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ- 190 օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն օրենքը սահմանում է Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման (այսուհետ՝ վերարտադրություն), պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները: Սևանա լիճը Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանն է:

Սույն օրենքի առաջնային նպատակը Սևանա լիճը՝ որպես խմելու ջրի պաշար պահպանելն է: Այլ նպատակով լճի ջրի օգտագործումը (հողերի ոռոգում, էներգետիկ և այլն) ստորադասվում է առաջնային նպատակին»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն: Կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը:»

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» ենթակետից հանել «(բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի)» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է լճի ջրային բացասական հաշվեկշռի բացառելու, լիճը որպես խմելու ջրի ռազմավարական պաշար դիտարկելու և ցանկացած այլ նպատակով ջրօգտագործումը ստորադասելու անհրաժեշտությամբ:

Սևանա լիճը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն: Այն համարվում է խմելու համար պիտանի բնական ջրամբար:

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով ամրագրված է լճից ջրի առավելագույն չափաքանակ՝ 170 մլն մ^3 : Ջրբացթողումներն իրականացվում են ՀՀ կառավարության ամենամյա որոշումներով ամրագրված ամենամյա չափաքանակների շրջանակներում՝ սահմանված կարգին համապատասխան: Տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում Կառավարությունը ՀՀ օրենքով սահմանված կարգով կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել չափաքանակի փոփոխության մասին ժամանակավոր ծրագիր, որը հաստատվում է համապատասխան օրենքի ընդունմամբ:

2008, 2012, 2014, 2017, 2018 թվականներին Սևանա լճից 170 մլն մ3 առավելագույն չափաքանակից ավելի ջրառ է իրականացվել:

2012 թվականին «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվեց՝ լճի ջրային բացասական հաշվեկշիռ ունենալու հնարավորություն (օրենքով նախատեսված դեպքերում), որը տեղի ունեցավ 2012, 2014 և 2018 թվականներին:

Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով, ջրի տաքացման, ջրիմուռների բազմացման շնորհիվ մեծացել է քաղցրահամ լճի ճահճացման վտանգը և բնական ռեժիմի փոփոխությունը կհանգեցնի լճի և նրա ավազանի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը:

Մասնագետները հաշվարկել են, որ Սևանա լճի էկոհամակարգի կայունացման միակ նախապայմանը լճի ծավալի մեծացումն է և ջրի մակարդակի բարձրացումը:

Առաջարկության նպատակն է բացառել լճի ջրային բացասական հաշվեկշիռը և այն՝ որպես խմելու ջրի պաշար պահպանել:

Օրենքի նախագծում առաջարկվում է նաև արգելել ՓՀԷԿ-երի կառուցումը կենտրոնական և անմիջական գոտիներում:

Հանրապետությունում մեծ թափ է ստացել ՓՀԷԿ-երի կառուցման գործընթացը: Որպես վերականգնվող էներգառեսուրսով աշխատող էներգետիկայի օբյեկտներ, այդ կայանները բնապահպանական տեսակետից ունեն որոշ դրական ազդեցություն, քանի որ դրանց գործարկումը չի ուղեկցվում մթնոլորտ վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետմամբ, սակայն ՓԷՀԿ-երն ունեն մի շարք թերություններ, որոնք բացասաբար են ազդում բնական

միջավայրի վրա:

- ՓՀԷԿ-երի կառուցումն անխուսափելիորեն ուղեկցվում է հողհատկացումով, կենսաբազմազանության վրա բացասական ներգործությամբ, հատկապես ջրաթեք (դերիվացիոն) կառույցների և ճնշումային խողովակների տեղադրման արդյունքում:
- Ջրառի հետևանքով ՓՀԸԿ-երն ունեն զգալի բացասական ներգործություն բնական ջրահոսքերում ջրային էկոհամակարգերի և, առանձնապես, ձկնային աշխարհի վրա:

Ներկայումս գործող ջրառի սահմանափակումները կրում են զուտ սանիտարական բնույթ և չեն ապահովում ջրային էկոհամակարգերի պահպանության անհրաժեշտ մակարդակ:

Առանձին հիմնախնդիր է Սևանա լճի ավազանի գետերի վրա ՓՀԸԿ-երի տեղադրման հարցը: Սիգ և լճածածան ձկնատեսակներից բացի, Սևանի իշխանի պահպանված երկու ենթատեսակները (գեղարքունի, ամառային իշխան), կողակ և բեղածուկ (բեղլու) ձկնատեսակները ձվադրում են լիճ թափվող գետերում և չափազանց կարևոր է ձվադրման ժամանակահատվածում գետերում ապահովել ջրի քանակական և որակական անհրաժեշտ պայմաններ: